

* *

Թէ սիրտս դնեմ արեւի սրտին.

կրկին մրսելու եմ:

— Բայց Ա ես եմ Սէրբ:

Թէ երազներս կապեմ ծիածանի մէջքին.

Թէ աշխարհը դիտեմ՝ կզակս դրած հորիզոնին,

կրկին զարթնելու եմ:

— Բայց Ա ես եմ Միտքը:

Թէ որքան մոլեգին ու խելագար՝ հեղեղի նման
արշաւեմ ցաւի անցքերով . . .

Կեանքի անիմատ ծովը հասնելիս,

կրկին խաղալիք եմ լինելու անյայտ փոթո-
րիկներին:

— Բայց Ա ես եմ Զաղթանակը:

Թէ մէջքս տամ սարերի մէջքին.

Թէ կանգնիմ՝ հսկայ ամպերի հետ անցնող դա-

թիւը գրկելու,

կրկին հանգելու եմ, վայրկեանի միջոցը՝ ինձ
արած գերեզման:

— Բայց Ա ես եմ Կեանքը:

ՅԱԻԵՐՈՒԱԿԱՆԻ ԽԵՆԴ

* *

Շուապիւր, —

Արեւ մարն է մտնում Նկեղեցու ետեւ:

Շուապիւր, —

Խաչին շուաքը քո հանապարհովն է սողում:

Վազիր, վազիր

Հասիր լուսաւոր հողին վրայ.

Գրկիր քո Շուաքը միայն.

Հասնելու է Գիշերը.

Բայց Ա միշտ անցնելու է ինչպէս գիշերը:

Անցիր Գիշերով . . .

Արեւի վերեւ Արեւին սպասիր:

Արշալոյս է. —

Գրկիր Արեւը . . .

Եզիր Աշխարհին . . .

Ու Տիեզերքին Գումարը եղիր:

Այսպէս:

ՀՈԳՈՒ ԿԱՐՕՏԸ՝ ՏԻԵՋԵՐՔԻՆ

Յ. ԱՅԵՄԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Ե Ր Կ Ա Մ Ս Ն Ա Յ Վ Ա Ր Բ Ե Ր Ա Փ Ե Ր Փ

Բ. ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 1.

Մշտաւոր — Ռաֆայէլեան Լուսիկին աշակերտաց միութեան պաշտօնա-
քերթին վերստին հրատարակութիւնը հաճոյքով կ'ողջունենք:

M. A. ALTOUNIAN

49, Rue Rochecouart

PARIS IX^e (France)